

## Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

### ԱՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության 2021թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2021թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 27 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 5 բյուջետային հիմնարկներում, 11 պետական ոչ առևտրային, 1 համայնքային ոչ առևտրային և 6 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 2 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում, 1 հիմնադրամում և 1 քաղաքային համայնքում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 46719.0 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 3336.8 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 453.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 2883.6 հազ.դրամ,

- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 2297.4 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 1821.3 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 476.1 հազ.դրամ,

- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 122.9 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,

- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 2500.0 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման ձեռնարկության հաշվին,

- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 4428.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 4219.8 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 208.3 հազ.դրամ,

- նորմերի խախտումներ՝ 5115.3 հազ.դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման,

- գերածախս՝ 5479.4 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 36.0 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 5407.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 35.7 հազ.դրամ,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 21103.9 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 18804.2 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 2299.7 հազ.դրամ,

- պակասորդ՝ 2335.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե 217.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 2117.9 հազ.դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 25674.7 հազ.դրամ, համայնքային բյուջե վերականգնման ենթակա գումարները՝ 5616.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 7537.2 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 7891.1 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 46719.0 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 13326.6 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 2007.1 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 1341.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 6202.0 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպվել է՝ 2775.8 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 33392.4 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 23667.6 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 4274.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1335.2 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպման՝ 5115.3 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում «Արցախկապ» ՓԲԸ-ի և ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ տարիներում կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2021թ. պետական բյուջե է վերականգնվել/վերաձևակերպվել 23880.7 հազ.դրամ և ձեռնարկության հաշվին՝ 3221.2 հազ.դրամ:

Ընդամենը 2021թ. պետական բյուջե է վերականգնվել 25887.8 հազ.դրամ, որից 2021թ. արդյունքներով 2007.1 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 23880.7 հազ.դրամ: 2021թ. արդյունքներով համայնքային բյուջե է վերականգնվել 1341.7 հազ.դրամ: 2021թ. ձեռնարկության հաշվին է վերականգնվել 9423.2 հազ.դրամ, որից 2021թ. արդյունքներով 6202.0 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 3221.2 հազ.դրամ: 2021թ. արդյունքներով հաշվառումով վերաձևակերպվել է 2775.8 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով իննը հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԱՀ քննչական կոմիտե:

**ԱՀ ֆինանսների նախարարի  
տեղակալ՝**

**Ա.Ա.Ամիրջանյան**